ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/02

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 08.01.2018թ. ներկայացրել է բողոք, որը կազմված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2018թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Խորհուրդ ներկայացնելու համար:

Ընկերությունը 10.01.2018թ. Խորհրդին է ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել է հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացնում է բողոք՝ «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով Ինտերակտիվ

գրատախտակների ձեռքբերման նպատակով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների և կայացրած որոշումների դեմ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 19.12.2017թ. ժամը 16:09-ին գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով Ինտերակտիվ գրատախտակների ձեռքբերման նպատակով մեկ անձից գնման ընթացակարգի հրավերը:

Ս.թ. դեկտեմբերի 20-ին ժամը 15:58-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուսումնասիրելով տրամադրված «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը և ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ի կետի և նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով ուղարկված էլեկտրոնային նամակով խնդրել է հանձնաժողովին տալ պաշտոնական պարզաբանում նշված ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով պահանջված՝ Ինտերակտիվ գրատախտակի (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ) հավաքածուի վերաբերյալ:

Ս.թ. դեկտեմբերի 21-ին ժամը 09:43-ին ի պատասխան վերը նշված հարցմանը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է Պատվիրատուի պաշտոնական ձևաթղթի վրա տպված և Պատվիրատուի տնօրենի կողմից 21.12.2017թ. ստորագրված և կնքված փաստաթուղթ:

Վերոհիշյալ փաստաթուղթը տրամադրվել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին՝

1) «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ընթացակարգի Հրավերի 3.1 կետի, այն է՝ «Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 3 ժամ առաջ», ուղղակի և կոպիտ խախտմամբ՝

ա) Հրավերի 3.1 կետը միանշանակ և ուղղակի պահանջում է, որ պարզաբանումը մասնակցին տրամադրվի հենց Գնահատող հանձնաժողովի կողմից.

բ) Հայտերի բացման նիստը կայացել է համաձայն նույն հրավերով հաստատված ժամանակացույցի՝ ս.թ. դեկտեմբերի 21-ին (այսինքն՝ նույն օրը) ուղիղ ժամը 12:00-ին, ինչը հաստատվում է, թե նշված նիստին մասնակցած «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի աշխատակից Ա.

Նիգարյանի կողմից, թե ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 21.12.2017թ. թիվ 2 արձանագրությամբ:

2) 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի, այն է՝ «Գնահատող հանձնաժողովը... պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ» պահանջների ուղղակի և կոպիտ խախտմամբ, քանզի պարզաբանումը տպված է Պատվիրատուի պաշտոնական ձևաթղթի վրա և ստորագրված է Պատվիրատուի տնօրենի կողմից, այլ ոչ թե հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի կողմից, այն դեպքում, երբ պահանջված պարզաբանման ուսումնասիրությունն և վերջինիս պատասխանելը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածի, հանդիսանում է գնահատող հանձնաժողովի ուղիղ պարտականությունը:

Այսպիսով, փաստորեն չտրամադրելով մասնակցին ՀՀ «Գնումների մասին» գործող օրենսդրությանը համապատասխան պարզաբանում, գնահատող հանձնաժողովն ուղղակի և կոպիտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ի կետի պահանջները:

Հատուկ բևեռում ենք ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունը առ այն, որ.

- 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը բացարձակապես չեն սահմանում և չեն պարունակում գնման ընթացակարգի այս կամ այն կողմի կատարած խախտումների կարևորության մեջ որևիցե աստիճանավորում կամ որևէ այլ տեսակ դասակարգում.

- եթե գոյություն ունենար որևէ նման աստիճանավորում կամ որևէ այլ տեսակ դասակարգում գնման ընթացակարգի այս կամ այն կողմի կատարած խախտումների միջև, ապա դա պարտադիր և առանձին կնշվեր վերը թվարկված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պատրաստ է պաշտպանել այս դիրքորոշումն ընդհուպ մինչև բոլոր երեք ատյանների դատարաններում:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից՝ այսպես կոչված, պարզաբանման պատասխանին, հատուկ բևեռում ենք ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն առ այն, որ ս.թ. դեկտեմբերի 20-ին գնահատող հանձնաժողովին ուղղված պարզաբանման հարցման մեջ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն խնդրել էր տրամադրել տեխնիկական առումով

հիմնավորված և տարակերպ մեկնաբանությունը լիովին բացառող պարզաբանումներ, նշված հարցման մեջ հնչեցված բոլոր 7 հարցերի վերաբերյալ:

Ստորև ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությանն ենք ներկայացնում գնահատող հանձնաժողովին ուղղված բոլոր 7 հարցերը, Պատվիրատուից ստացված բոլոր 7 պատասխաններն և այդ պատասխանների մանրամասն վերլուծությունը:

Հարց №1՝ «Հավելված N1 «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում նշված չէ պահանջվող պրոյեկտորի իսկական և մակսիմալ արհեստական (ինտերպոլացված) կետայնությունը:

Խնդրում ենք հստակ նշել ցանկացած պրոյեկտորի այդ երկու կարևորագույն ցուցանիշները»:

Պատասխան №1՝ «1-ին կետի վերաբերյալ՝ գնման առարկայի բոլոր կարևորագույն չափանիշները սահմանված են հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում:

Կետայնությունը կարող է լինել Native Resolution: 800x600»:

Վերլուծություն №1՝ Պատվիրատուն ոչ միայն հակասում է ինքն իրեն՝ պնդելով, որ «գնման առարկայի բոլոր կարևորագույն չափանիշները սահմանված են հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում» և միևնույն ժամանակ պատասխանում է տրված հարցին, բայց միայն նրա առաջին մասին՝ «Կետայնությունը կարող է լինել Native Resolution: 800x600», այլև, վերջին 2 տարիների ընթացքում արդեն իսկ 4-րդ անգամ անցկացնելով նույն ինտերակտիվ գրատախտակների գնման ընթացակարգը, նույն տեխնիկական բնութագրերով, այդպես էլ չկարողացավ պատկերացում կազմել, որ պահանջված տվյալներն՝ իսկական և մակսիմալ արհեստական (ինտերպոլացված) կետայնությունը, հանդիսանում են ցանկացած թվային պրոյեկտորի կարևորագույն ցուցանիշները, որոնք էլ սարքի լույսային հոսքի հետ համատեղ հենց բնորոշում են ցանկացած պրոյեկտորի գինը:

Տրված պատասխանը՝ «Կետայնությունը կարող է լինել Native Resolution: 800x600» ուղղակի ապշեցնում է՝ ստացվում է այնպես, որ Պատվիրատուի պատկերացմամբ պահանջվող պրոյեկտորի մինիմալ ընդունելի իսկական կետայնությունն, որն էլ հենց բնորոշում է պատկերի որակը, կարող է և լինել, և չլինել 800x600 կետին հավասար, ու լինել նույնիսկ ավելի ցածր, քան նշված արդեն իսկ ավելի քան բարոյապես հնացած 800x600 կետայնությունը:

Տրված պատասխանը ոչ միայն մասնակի է պատասխանում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից հնչեցված պարզաբանման հարցմանն, այլև ուղղակիորեն հակասում է 16.12.2016թ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (4-րդ կետ) և 3-րդ մասերի պահանջներին, այն է՝

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

4)ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

Հարց №2՝ «Ի՞նչ է նշանակում պրոյեկտորը բնութագրող արտահայտությունը՝ «պետք է կցված չլինի գրատախտակի հետ որպես նրա բաղկացուցիչ մաս և պահանջի դեպքում հնարավոր լինի նրան առանձնացնել և օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս այլ ծրագրեր իրականացնելու համար»:

Ցավոք, նշված արտահայտությունը պարզապես տեխնիկական առումով լիովին առ ոչինչ է, ավելի քան անբացատրելի և անիմաստ:

Այդ արտահայտությունը թեկուզ մեկ քանակական կամ որակական բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևէ կերպ դասակարգվել:

Արդյո՞ք գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ, որ ցանկացած թվային պրոյեկտոր իրենից ներկայացնում է հենց առանձին սարքավորում, որը, կախված նրա լուսային հոսքից, կետայնությունից, պրոյեկցիոն էկրանի ընդհանուր մակերեսի չափերից և արտաքին միջավայրի լուսավորության պայմաններից, հնարավոր է օգտագործել ցանկացած

լույս արտացոլող մակերեսի վրա պատկեր ստանալու համար՝ ցանկացած սենյակում, դահլիճում և նույնիսկ դրսում:

Պատասխան №2՝ «2-րդ կետի վերաբերյալ՝ «պետք է կցված չլինի գրատախտակի հետ որպես նրա բաղկացուցիչ մաս և պահանջի դեպքում հնարավոր լինի նրան առանձնացնել և օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս այլ ծրագրեր իրականացնելու համար» արտահայտությունը պարզ և հասկանալի է և նշանակում է, որ պրոյեկտորը պետք է հնարավոր լինի առանձնացնել գրատախտակից և առանձին օգտագործել»:

Վերլուծություն №2՝ Պատվիրատուն նույնիսկ շնորհ չի արել ուշադիր կարդալ հնչեցված հարցման 4-րդ պարբերությունը, որտեղ պարզ և լիովին ընկալելի բացատրվում է, որ «...ցանկացած թվային պրոյեկտոր ներկայացնում է իրենից հենց առանձին սարքավորում...» և փաստորեն կրկնել է Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր» հայտնի դրվագը, հենց որի վերաբերյալ էլ Պատվիրատուին հարց էր տրվել:

Թե Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր» նշված դրվագը, թե տրված պատասխանը թեկուզ մեկ քանակական կամ որակական բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չեն կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել և ուղղակիորեն հակասում են 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (4-րդ կետ) և 3-րդ մասերի պահանջներին:

Հարց №3՝ «Ինչպե՞ս է հանձնաժողովը պատկերացնում այն, որ առաստաղին կամ պատին՝ հատակից միջինը 2.5-2.7 մ բարձրության վրա, կոշտ ֆիքսված և գրատախտակի հետ արդեն իսկ համակցված, լիովին կարգավորված, պրոյեկտորը «...պահանջի դեպքում հնարավոր լինի նրան առանձնացնել և օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս այլ ծրագրեր իրականացնելու համար...»:

Արդյոք դպրոցում կա՞ հատուկ վարժված տեխնիկական մասնագետ, որն ամեն անգամ աստիճանով բարձրանալու է առաստաղի տակ, զգուշությամբ ապամոնտաժելու այդ պրոյեկտորը կախիչից ու մալուխներից, տեղափոխելու է այլ սենյակ կամ դուրս և միջոցառման ավարտից հետո դարձյալ կատարելու նույն գործողությունները՝ հակառակ հերթականությամբ, այնուհետև կատարելով պրոյեկտորի անհրաժեշտ համակցումը և կարգավորումը գրատախտակի հետ:

Ամենայն պատասխանատվությամբ կուզենայինք հավաստիացնել հանձնաժողովին, որ թե միջազգային, թե «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 11 տարուց ավելի գոյություն ունեցող փորձը (700 ավել ինտերակտիվ լսարաններ միայն ՀՀ կրթօջախներում)՝ բացառապես, չի ենթադրում

ինտերակտիվ գրատախտակների հետ համակցված պրոյեկտորների պարբերաբար ապամոնտաժումն ու մոնտաժումը»:

Պատասխան №3՝ «3-րդ կետի վերաբերյալ՝ պատվիրատուի պահանջն է և պատվիրատուն ցանկանում է անհրաժեշտության դեպքում հնարավոր լինի պրոյեկտորն առանձնացնել ընդհանուր համակարգից»:

Վերլուծություն №3՝ գնահատող հանձնաժողովին/Պատվիրատուին նշված պարզաբանման հարցման 2-րդ կետում արդեն իսկ բացատրվել էր, որ «...ցանկացած թվային պրոյեկտոր ներկայացնում է իրենից հենց առանձին սարքավորում...», իսկ նույն հարցման 3-րդ կետի 3-րդ պարբերությունում հստակ նշված է, որ ինտերակտիվ գրատախտակների հետ համակցված պրոյեկտորների պարբերաբար ապամոնտաժումն ու մոնտաժումը ուղղակիորեն հակասում է, թե միջազգային, թե «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 11 տարուց ավելի գոյություն ունեցող (700 ավել ինտերակտիվ լսարաններ միայն ՀՀ կրթօջախներում) պրակտիկային:

Ավելին, դպրոցում ի սպառ բացակայում է հատուկ վարժված տեխնիկական մասնագետ, որն ի վիճակի կլինի ամեն անգամ աստիճանով բարձրանալ առաստաղի տակ, զգուշությամբ ապամոնտաժել այդ պրոյեկտորը կախիչից ու մալուխներից, տեղափոխել այլ սենյակ կամ դուրս և միջոցառման ավարտից հետո դարձյալ կատարել նույն գործողությունները հակառակ հերթականությամբ, այնուհետև կատարելով պրոյեկտորի անհրաժեշտ համակցումն և կարգավորումը գրատախտակի հետ:

Տվյալ հանգամանքի անվիճելի վկայությունն է այն, որ 2017թ. ընթացքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ինժեներական անձնակազմը Պատվիրատուի տնօրենի խնդրանքով արդեն իսկ ապամոնտաժել և տեղափոխել է այլ դասասենյակներ (ի դեպ լիովին անվճար) 2016թ. «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում դպրոցի կողմից ձեռք բերված 2 (երկու) Ինտերակտիվ գրատախտակների լրակազմեր, իսկ 2017թ. դեկտեմբերի վերջին, երբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի աշխատակիցները «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ընթացակարգի շրջանակներում դպրոցի դահլիճում տեղադրում էին պրոյեկցիոն համակարգ, Պատվիրատուի տնօրենը կրկին դիմել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն նույն խնդրանքով՝ 2 (երկու) այլ Ինտերակտիվ գրատախտակների լրակազմեր տեղափոխել այլ դասասենյակներ:

Պատվիրատուից բարձրացված հարցի վերաբերյալ ստացված պարզաբանումը ոչ միայն ապշեցնում է տեխնիկական առումով որևէ օբյեկտիվորեն հիմնավորվածության իսպառ

բացակայությամբ, այլև ուղղակիորեն հակասում է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներին, այն է՝

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

3)պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»:

Հարց №4՝ «Կուզենայինք նշել, որ համաձայն տարրական ֆիզիկայի օրենքների առաստաղային կախոցի վրա ազդում է ուղղահայաց ուժ, իսկ պատի կախոցի վրա՝ պտտվող մոմենտը, ինչի պատճառով այդ երկու կախոցները լրիվ տարբեր կոնստուկտիվ լուծումներ են պահանջում, և տնտեսական տեսանկյունից համատեղել այդ երկու տարբեր լուծումները մի սարքավորման մեջ՝ անկասկած աննպատակահարմար է:

Բացի այդ, որևիցե լուրջ կազմակերպություն չի արտադրում պրոյեկտորի կախոց նախատեսված միաժամանակ և առաստաղին և պատին ամրացնելու համար:

Խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ սովորաբար առաստաղին ամրացվող պրոյեկտորների կախոցներն օգտագործվում են սովորական պրոյեկտորներն ամրացնելու համար, իսկ պատին ամրացվող պրոյեկտորների կախոցները՝ կարճատև գերկարճաֆոկուս պրոյեկտորների համար:

Վերջին դեպքում պրոյեկտորն ինտերակտիվ համակարգի կազմում օգտագործելու ժամանակ նրա աշխատանքի հետևանքով գրատախտակի հետ աշխատելիս բնականաբար առաջացող ստվերը՝ համեմատ սովորական պրոյեկտորների, պակասում է 50 – 90%, ինչն անչափ կարևոր է ուսումնական գործընթացում դասավանդվող նյութը ցուցադրելու համար:

Խնդրում ենք հստակ և տեխնիկական առումով հիմնավորված պարզաբանել, թե ինչո՞վ է բնորոշված հանձնաժողովի պահանջը մատակարարել պրոյեկտորի կախոց «առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ»:

Պատասխան №4՝ «4-րդ կետի վերաբերյալ՝ առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ կախոցի ձեռքբերման անհրաժեշտությունը բխում է պատվիրատուի պահանջներից:»

Վերլուծություն №4՝ Պրոյեկտորի կախոցին վերաբերվող հարցի նախաբանում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրել էր մանրամասն տեխնիկական տեղեկատվություն նշված կախոցների վերաբերյալ, պարզաբանել էր, թե որ պրոյեկտորների հետ, որ դեպքերում անհրաժեշտ է օգտագործել այս կամ այն տեսակ կախոցը, և խնդրել «հստակ և տեխնիկական առումով հիմնավորված պարզաբանել, թե ինչո՞վ է պայմանավորված

հանձնաժողովի պահանջը մատակարարել պրոյեկտորի կախոց «առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ»:

Պատվիրատուից բարձրացված հարցի վերաբերյալ ստացված պարզաբանումը՝ «... 4-րդ կետի վերաբերյալ՝ առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ կախոցի ձեռքբերման անհրաժեշտությունը բխում է պատվիրատուի պահանջներից...» ոչ միայն ապշեցնում է իր պարզունակությամբ և տեխնիկական առումով որևիցե օբյեկտիվորեն հիմնավորվածության իսպառ բացակայությամբ, այլև ուղղակիորեն հակասում է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին:

Նույնիսկ, եթե աչքաթող անենք այն փաստը, որ Հրավերի Հավելված N1 «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում լիովին բացակայում է պահանջվող կախոցի ոչ թե ամբողջական և հստակ նկարագրությունը, այլ ընդհանրապես որևիցե տեխնիկական բնութագիրը, ապա միևնույն է ստիպված ենք փաստել, որ ստացված պարզաբանման մեջ ուղղակի ի խախտումն վերոհիշյալ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների, ի սպառ բացակայում է, թե որևիցե օբյեկտիվ հիմնավորվածություն, թե համարժեքություն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը՝ Ինտերակտիվ գրատախտակի (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ) հավաքածուի համար:

Հարց №5՝ «Ի՞նչ է նշանակում «...գրատախտակը պետք է մշակված լինի այնպես, որ աշխատի առաջարկվող պրոյեկտորի հետ...» արտահայտությունը:

Նշված արտահայտությունը պարզապես տեխնիկական առումով լիովին առոչինչ է, ավելի քան անբացատրելի և անիմաստ:

Այդ արտահայտությունը թեկուզ մեկ քանակական կամ որակական կամ բնութագրող բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել»:

Պատասխան №5՝ «5-րդ կետի վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ շուկայում առկա են տարբեր բնութագրերով գրատախտակներ, որոնց վրա առաջարկվող պրոյեկտորի պատկերի արտացոլումը կարող է լինել անորակ, այդ իսկ պատճառով պահանջը, որ գրատախտակը աշխատի պրոյեկտորի հետ նշանակում է, որ գրատախտակի վրա արտացոլված պատկերը լինի որակյալ, պարզ և տեսանելի»:

Վերլուծություն №5՝ ստացված պատասխանը պարունակում է ավելի գեղարվեստական գրականությանը, քան տեխնիկական պարզաբանմանը վայել արտահայտություններ և պահանջներ:

Թե Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր» վերը նշված դրվագը գրատախտակի վերաբերյալ, թե տրված պատասխանը՝ թեկուզ մեկ քանակական կամ որակական բնորոշիչ հատկության բացակայության պատճառով, չեն կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել և ուղղակիորեն հակասում են 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (4-րդ կետ) և 3-րդ մասերի պահանջներին:

Հարց №6՝ «Ի՞նչ է նշանակում «մագնիսական սենսոր», ի՞նչի մասին է ընդհանրապես գնում խոսքը:

Արդյո՞ք գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ, որ նշված արտահայտությունը պարզապես տեխնիկական առումով լիովին առ ոչինչ է, ավելի քան անբացատրելի և անիմաստ:

Այդ արտահայտությունը թեկուզ մեկ քանակական կամ որակական կամ բնութագրող, բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել»:

Պատասխան №6՝ «6-րդ և 7-րդ կետերի վերաբերյալ՝ խոսքը գնում է սենսորի մասին, որը ինտերակտիվ դաշտ ստեղծելու բաղադրիչներից մեկն է, իսկ հպման եղանակով համակարգում աշխատելու համար սենսորի հետ կարող են լինեն պարագաներ՝ օրինակ անդրադարձիչներ, որոնք համակարգի տեղադրման ժամանակ կարող են ամրացվել գրատախտակին կամ պատին»:

Վերլուծություն №6՝ հատուկ բևեռում ենք ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն առ այն, որ.

- Մինչև ս.թ. դեկտեմբերի 21-ի ժամը 09:43-ը գիտությանը դեռ հայտնի չէր, այսպես կոչված, «մագնիսական սենսոր»- ի միջոցով կամ օգնությամբ սենսորային (ինտերակտիվ) դաշտ ստանալու տարբերակը:

Հայերեն լեզվով սենսորային կամ ինտերակտիվ տեխնոլոգիաների վերաբերյալ ընդհանրացված տեղեկությունների բացակայության պատճառով ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությանն ենք ներկայացնում մի քանի համապատասխան հղումներ ռուսերեն լեզվով՝ https://www.iguides.ru/main/other/kakie_byvayut_sensornye_ekrany/, http://touchmonitors.ru/glossary/touch_tecnology/?action=list, http://www.wizard-m.ru/sensory-systems/sensor-technology:

- Դպրոցական ծրագրում ներառված տարրական ֆիզիկայի դասընթացներից, նշված պատասխանը պատրաստող անձին/անձանց պետք է, որ հայտնի լիներ, որ մարդու մատը

հաղորդալար չի հանդիսանում և չի կարող համագործակցել մագնիսական դաշտի հետ, այն էլ սենսորային (ինտերակտիվ) դաշտ ստանալու համար:

Տրված պատասխանը ոչ միայն ակնհայտ սխալ է և հակասում է տարրական ֆիզիկայի օրենքներին, այլև ուղղակիորեն հակասում է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (4-րդ կետ) և 3-րդ մասերի պահանջներին:

Հարց №7՝ «Ի՞նչ է նշանակում «...ներառյալ համակարգում աշխատելու համար պահանջվող պարագաները, որոնք պետք է տեղադրվեն և/կամ գրատախտակի վրա և/կամ պատին» արտահայտությունն, ի՞նչի մասին է ընդհանրապես գնում խոսքը:

Նշված արտահայտությունը նույնպես տեխնիկական առումով լիովին առոչինչ է, ավելի քան անբացատրելի և անիմաստ է:

Այդ արտահայտությունը թեկուզ մեկ քանակական կամ որակական կամ բնութագրող, բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել»:

Պատասխան №7՝ «6-րդ և 7-րդ կետերի վերաբերյալ՝ խոսքը գնում է սենսորի մասին, որն ինտերակտիվ դաշտ ստեղծելու բաղադրիչներից մեկն է, իսկ հպման եղանակով համակարգում աշխատելու համար սենսորի հետ կարող են լինեն պարագաներ՝ օրինակ անդրադարձիչներ, որոնք համակարգի տեղադրման ժամանակ կարող են ամրացվել գրատախտակին կամ պատին»:

Վերլուծություն №7՝ քանզի Հարց №6 վերաբերյալ արդեն իսկ ներկայացված վերլուծությունում հստակ ապացուցված է, այսպես կոչված, «մագնիսական սենսոր»-ի միջոցով կամ օգնուտյամբ սենսորային (ինտերակտիվ) դաշտ ստանալու անհնարինությունը, ապա Ինտերակտիվ գրատախտակի հետ իբր օգտագործվող մագնիսական դաշտի անդրադարձիչների մասին նույնիսկ խոսելն ավելորդ է:

Տրված պատասխանը ուղղակիորեն հակասում է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (4-րդ կետ) և 3-րդ մասերի պահանջներին:

Համոզված ենք, որ ներկա «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» հրավերի տեխնիկական բնութագրերի ակնհայտ անփույթությունը բխում է այն բանից, որ գնահատող հանձնաժողովը պարզապես չի կատարել որևիցե նախապատրաստական աշխատանք և գրեթե մեկին մեկ արտատպել է նույն Պատվիրատուի կողմից 2016թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/2», ինչպես նաև 2017թ. հոկտեմբերին «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» (հայտարարվել է չկայացած) ծածկագրերով անցկացված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի

տեխնիկական բնութագրերը, որոնցից առաջին երկու հրավերների վերաբերյալ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացրել էր համապատասխան պարզաբանման հարցումներ և այդպես էլ չէր ստացել որևիցե իմաստալից բացատրություն:

Ի դեպ նշենք, որ առաջին երկու նշված դեպքում էլ՝

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովների կողմից ճանաչվել էր ընտրված մասնակից, և նրա հետ կնքվել էին համապատասխան պայմանագրեր,

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն մատակարարել և տեղադրել է նույն Պատվիրատուի մոտ նույն վերոհիշյալ NEC UM3xxWi սերիայի թվային պրոյեկտորներից (3 x UM301Wi + 1 x UM352Wi), նրանց կազմի մեջ ներառած նույն պատի կախոցներից և նույն գրատախտակներից բաղկացած համակարգեր, որոնք առաջարկված են նաև «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի Հրավերի շրջանակներում:

Ի դեպ, բոլոր երեք նշված դեպքում էլ գնահատող հանձնաժողովների նախագահ և քարտուղար էին հանդիսանում հենց նույն «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դ.Մակիչյանն և քարտուղար՝ Հ. Ղազարյանը:

Ինչ վերաբերվում է այսպես կոչված, «մագնիսական սենսոր»-ի հայտնվելուն «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ընթացակարգի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագրում», ապա դա, մեր խորին համոզմամբ, հնարավոր է բացատրել միայն գնահատող հանձնաժողովի և առաջին հերթին նրա քարտուղար Հ. Ղազարյանի վերին աստիճանի կասկածելի ցանկությամբ՝ կանխավ ապահովել «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի համար ավելի քան անարդարացի առավելություն, քանզի զուտ տեխնիկական տեսակետից, թե «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5», թե «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգերի շրջանակներում նշված ՍՊԸ-ի կողմից առաջարկված՝ բարոյապես լիովին հնացած և դեռևս հեռավոր 2012թ. արտադրված Starboard LinkEZ2 սարքն իրենից ներկայացնում է մեկ հատ սենսոր մոտ 51 x 7.6 x 4 սմ չափսերով, սակայն, բնական է, ոչ հպման կոորդինատների ախտորոշման «մագնիսական» տեխնոլոգիայով աշխատող, ինչը, ցավոք դժվարացել են ընկալել և հասկանալ, թե գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանը, թե «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն:

Անհրաժեշտ է նաև հատուկ շեշտել, որ դեռևս 2017թ. նոյեմբեր ամսին ԳԲԽ-ԷՍ-2017/45 բողոքի քննության ժամանակ նույն գնահատող հանձնաժողովին անկասկած հայտնի է դարձել, որ՝

- մատակարարման համար առաջարկված և ընդամենը 249 ԱՄՆ դոլարով վաճառվող (https://www.cnet.com/products/hitachi-starboard-link-ez2-pen-infrared-interactive-unit/Starboard

LinkEZ2 սենսորները արտադրված են հեռավոր 2012թ. հոկտեմբերին ու ներկայումս արտադրությունից հանված են.

- Starboard LinkEZ2 սենսորները տեսականորեն՝ լավագույն դեպքում, պետք է ունենային 3 տարվա երաշխիք, ներկայումս միանշանակ դուրս են արտադրողի կողմից տրվող որևիցե երաշխիքային սպասարկումից.

- Starboard LinkEZ2 սարքերն աշխատում են միայն տարիներ առաջ արտադրությունից հանված և ավելի քան հնացած MS Windows XP (32 bit) /Vista/Windows 7 ծրագրային ապահովման հետ, որը պարզապես անհամատեղելի է ՀՀ կրթօջախներում օգտագործվող Windows 10 ծրագրային ապահովման հետ:

Եվ այսքանից հետո գնահատող հանձնաժողովը որպես առանձին կետ՝ «մագնիսական սենսոր»-ի անվան տակ՝ «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ընթացակարգի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագրում», պահանջում է մատակարարել Starboard LinkEZ2 սարքը:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովն այստեղ դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, այն է՝ «...գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն...»:

Ստանալով վերոհիշյալ պարզաբանման պատասխանը, հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից ընդամենը 2 ժամ 17 րոպե առաջ, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն այդ ավելի քան կարճ ժամանակահատվածում պարզապես ֆիզիկապես ի վիճակի չէր պատրաստել և ներկայացնել Գնումների բողոքարկման խորհուրդ հիմնավորված բողոք:

Համապատասխանաբար, ցանկանալով կանխարգելել Պատվիրատուի կողմից նույն օրը՝ 21.12.2017թ. պայմանագրի հնարավոր կնքումը, ինչի հնարավորությունը նրան ընձեռովում էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստիպված էր հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, թղթային ձևով «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին ներկայացնել իր հայտը:

Ս.թ. դեկտեմբերի 22-ին ժամը 13:54-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է ծանուցում. «Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է որոշակի անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրում պահանջվում էր կախոց՝ պատին և առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, սակայն Ձեր կողմից ներկայացված կախոցը նախատեսված է միայն պատին ամրացնելու համար:

Վերոնշյալ անհամապատասխանությունը շտկելու նպատակով խնդրում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ընթացակարգի հրավերում նշված պահանջներին համապատասխան, էլեկտրոնային փոստի միջոցով՝ hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով, ներկայացնել անհամապատասխանության շտկված տարբերակը»:

Ս.թ. դեկտեմբերի 25-ին ժամը 15:32-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն՝ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 66-րդ կետով, այն է՝ «...Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր...» իրեն վերապահված իրավունքով hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով ուղարկված էլեկտրոնային նամակով ներկայացրել է հանձնաժողովին և Պատվիրատուին որպես լրացուցիչ տեղեկություն պաշտոնական պարզաբանում՝ մանրամասն տեխնիկական բացատրություններ ու պարզաբանումներ՝ տալով հանձնաժողովի կողմից կատարված հարցադրմանն և անվիճելիորեն հիմնավորել է իր դիրքորոշումը:

Սակայն, ս.թ. դեկտեմբերի 26-ին ժամը 12:30-ին գնահատող հանձնաժողովն՝ անտեսելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացված փաստարկներն ու տրված տեխնիկական առումով ավելի քան հիմնավորված մանրամասն մասնագիտական բացատրությունները, ընդունում է «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 26.12.2017 թ. №3 արձանագրությունը, որտեղ՝

- փաստորեն կատարելով պաշտոնական կեղծիք՝ նշում է առանց որևէ բացատրության, որ «... «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից պահանջվող համապատասխան շտկումը չի իրականացվել...».

- թիվ 1 որոշմամբ էլ մերժում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը և ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված մասնակից) ճանաչում «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին.

- թիվ 2 որոշմամբ հաստատում է ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը, որը տեղեկագրում հրապարակվել է 28.12.2017թ. ժամը 14:53:08-ին:

Անհասկանալի է, թե ինչո՞ւ ընթացակարգի հանձնաժողովը չի անդրադարձել խնդրի մանրամասն ուսումնասիրությանը և շուտափույթ որոշում կայացրել, այն դեպքում, երբ համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը, սակայն վերջինս այս դեպքում նույնիսկ չի փորձել որևիցե նման քայլ ձեռնարկել:

Ինչ վերաբերում է ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված մասնակից) ճանաչված «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3.1-ով ներկայացված «Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրին», ապա ստիպված ենք հատուկ բևեռել ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն առ այն, որ տվյալ՝ նույնիսկ ամսաթիվ չունեցող փաստաթղթում, որում ըստ սահմանման, պետք է պարունակվի ապրանքի՝ Starboard LinkEZ2 սարքի, ամբողջական նկարագիրը, լիովին և ի սպառ բացակայում են տվյալներ այն մասին, թե քանի հատ միաժամանակյա հպում մատով ի վիճակի է ապահովել այս սարքը, մինչդեռ Հրավերի Հավելված N1 «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում հստակ ամրագրված է «...հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch)...»:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովն ի դեմս նախագահ Դ. Մակիչյանի, 2 անդամների և քարտուղար Հ. Ղազարյանի՝ դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է՝

1) 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝

- 5-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով

գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»,

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված...»

2) ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունն, այն է՝ «... մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...»:

- 46-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...».

- 47-րդ կետը, այն է՝ «...առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ... սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...»:

- 48-րդ կետի 2-րդ ենթակետն, այն է՝ «... Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում(...) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին...» պահանջները և կատարելով ակնհայտ պաշտոնական կեղծիք՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված մասնակից) ճանաչել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին:

Շեշտենք նաև, որ Starboard LinkEZ2 մակնիշի սարքավորումների Տեղեկատվական բրոշուրում հստակ նշված է, որ Starboard LinkEZ2 սարքավորումն ապահովում է հրավերով պարտադիր պահանջվող երեք միաժամանակյա հպման փոխարեն միայն 2 (երկու) միաժամանակյա հպում (Use your finger to annotate, fist to scroll and two fingers to erase or zoom in and out):

Ի դեպ, Մասնակիցը Հավելված 3.1-ում նշում է գրիչի չափսերը, սակայն չի նշում, թե արդո՞ք քանի գրիչ է ներառված առաջարկած Starboard LinkEZ2 սարքավորման կազմում:

Ի տեղեկություն ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի՝ Hitachi Solutions LTD ընկերությունը 2016թ. փետրվար ամսին StarBoard բիզնեսը և StarBoard ապրանքանիշը պարզապես վաճառել է չինական ShenZhen iBoard Technology Co., Ltd ընկերությանը:

Ի դեպ, ԳԲԽ-ԷՍ-2017/45 բողոքի քննության առնչությամբ («181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգ) 2017թ. նոյեմբերի 20-ի նիստի ընթացքում «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ներկայացրել էր ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին 1 հատ Starboard LinkEZ2 սարք և մեկ թերթ արտատպում www.hitachistarboard.us կայքից:

Ինչպես պարզ երևում է նշված լուսանկարներից՝ Starboard LinkEZ2 սարքի տուփի վրա ներկայացված մակնիշից՝ Starboard LinkEZ2-Pen և նույնիսկ Մասնակցի կողմից որպես ապացույց www.hitachistarboard.us կայքից (ի դեպ, այս WEB կայքը բացարձակապես կապ չունի Hitachi ընկերությունների խմբի որևիցե ընկերության հետ և պատկանում է ոմն ամերիկյան Clary Business Machines ընկերությանը՝ https://www.hitachistarboard.us/about-us) ներկայացված արտատպումից, նշված Starboard LinkEZ2-Pen սարքն աշխատում է միայն 2 գրիչների միջոցով և, բնականաբար, չի կարող ապահովել հրավերով պարտադիր պահանջվող «...առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանք ձեռքի հպման եղանակով (touch)...»:

ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդը կարող է նաև պահանջել «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ից ներկայացնել Starboard LinkEZ2 սարքն և տեղում ցուցադրել նրա աշխատանքը:

Մեզ ուղղակի չհաջողվեց որևիցե կերպ գտնել, թե «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից որպես գրատախտակի արտադրող մատնանշված Cosmic LTD ընկերությունը, թե Cosmic ապրանքային նշանի տակ արտադրվող որևիցե գրատախտակ: Հույս ենք հայտնում, որ ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդը այդ կապակցությամբ կպահանջի «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ից ներկայացնել համապատասխան փաստաթղթեր:

Մեզ ուղղակի չհաջողվեց գտնել նաև «Հայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից որպես PL PJ-1400 W պրոյեկտորի կախիչի արտադրող մատնանշված՝ ООО «Аллегри» ընկերությունը՝ ենթադրում ենք, որ խոսքը պետք է գնա ռուսական «ПРОИЗВОДСТВЕННАЯ КОМПАНИЯ АЛЛЕГРИ» ընկերության մասին (http://www.kreplenie.tv/about-us՝ արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին):

Վերոհիշյալ ԳԲԽ-ԷՍ-2017/45 բողոքի քննության առընչությամբ («181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ընթացակարգ) 2017թ. նոյեմբերի 20-ի նիստի ընթացքում «Հայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ներկայացրել էր նաև ոմն «ПринтЛюкс» ընկերության նամակը PL PJ-1400 W պրոյեկտորի կախիչի արտադրողի վերաբերյալ:

Սակայն լիովին անհասկանալի է, թե ի՞նչ իրավական հիմքերով է ղեկավարվում այս բելոռուսական վերավաճառող ընկերությունը երրորդ անձի, այն էլ՝ այլ երկրում՝ Ռուսաստանում գտնվող ընկերության անունից (այն էլ՝ սխալ՝ «ПРОИЗВОДСТВЕННАЯ КОМПАНИЯ АЛЛЕГРИ» փոխարեն նշված է ООО «Аллегри») հայտարարություններ անելիս վերջինիս կողմից տրամադրվող ծառայությունների կամ արտադրանքի վերաբերյալ: Իրավական տեսակետից տվյալ նամակը անհրաժեշտ է համարել լիովին առոչինչ:

Ինչ վերաբերում է PL PJ-1400 W կախիչի համար՝ որպես «Ծագման երկիր» մատնանշված Ռուսաստանին, ապա մեզ, ցավոք սրտի, չհաջողվեց գտնել այդ պնդումը հաստատող որևիցե ապացույց:

Փաստն այն է, որ նույնիսկ ենթադրվող արտադրողի՝ ռուսական «ПРОИЗВОДСТВЕННАЯ КОМПАНИЯ АЛЛЕГРИ» ընկերության WEB կայքում նշված մակնիշի պրոյեկտորի կախիչը ի սպառ բացակայում է՝ թե առաստաղային կախիչների (http://www.kreplenie.tv/products/projectory/proectory-potolochnie-kronshtejny), թե պատին ամրացվող կախիչների (http://www.kreplenie.tv/products/projectory/proectory-nastennie) շարքերում: Նշված պրոյեկտորի կախիչը առկա չէ և www.http://allegri-trade.ru WEB կայքում բերված կախիչների շարքում:

Սակայն նշված PL PJ-1400 W պրոյեկտորի կախիչը ներկայացված է բազմաթիվ բելոռուսական մասնավոր ընկերությունների WEB կայքերում, որոնցից մեկում, որպես այս ապրանքի ծագման երկիր իրոք նշված է Ռուսաստանը (https://media-group.by/p58405197-kronshtejn-dlya-proektora.html), բայց առանց արտադրողի մատնանշման, իսկ ինքը կախիչը վաճառվում է 78 բելոռուսական ռուբլիով (մոտ 40 ԱՄՆ դոլար):

Փաստ է նաև, որ գնահատող հանձնաժողովն առանց որևէ առարկության ընդունել էր «Հայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված PL PJ-1400 W պրոյեկտորի հենց

առաստաղային կախոցը (http://www.printlux.by/catalog/Kronshteyn-dlya-proektora-PL-PJ-1400W-beliy-23073.html)՝ նույնիսկ չվերհիշելով իր պահանջը՝ «կախիչը օգտագործել պրոյեկտորը միաժամանակ և առաստաղին, և պատին ամրացնելու համար»:

Նշենք, որ դիտվում է ավելի քան անհասկանալի, զարմանալի և ապշեցուցիչ ընտրողականության դրսևորում գնահատող հանձնաժողովի կողմից երկու մասնակիցների միջև:

Վերոհիշյալ գրատախտակի և կախոցի մասով գնահատող հանձնաժողովն ակնհայտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի, ինչպես և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 32-րդ (1-ին ենթակետի «զ» պարբերություն), 46-րդ, 47-րդ և 48-րդ (2-րդ ենթակետ) կետերի պահանջները:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից՝ գտնում ենք, որ Պատվիրատուն դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է

1. «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ընթացակարգի Հրավերի 3.1 կետի պահանջները.
2. 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները.
3. 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ի կետի պահանջները.
4. 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ (3-րդ և 4-րդ կետերի) և 3-րդ մասերի պահանջները.
5. 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.
6. ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 66-րդ և 67-րդ կետերի պահանջները.
7. 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ (2-րդ կետ) և 6-րդ մասերի պահանջները.
8. ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջները.
- 46-րդ և 47-րդ կետերի պահանջները.
- 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Բողոքով խնդրել է անվավեր ճանաչել «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը

մերժելու, և «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու որոշումները:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Էդուարդ Սաղաթելյանը և Արմինե Խամոյանը:

2. <u>«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.01.2018թ. գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով Ձեր կողմից 11.01.2018թ. գրությունը և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված բողոքի վերաբերյալ փաստաթղթերը՝ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը 09.01.2018թ. հետ է վերադարձվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, որի մասին նշված է 10.01.2018թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի լրացման տեքստում:

«181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 28.12.2017թ., այսինքն անգործության ժամկետը հանդիսանում է 02.01.2018թ. ներառյալ (հաջորդ աշխատանքային օրը՝ 08.01.2018թ.):

Սակայն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10.01.2018թ.-ին, պարզապես բողոքի փոխարեն տեքստում գրելով «Բողոքի լրացում» բառերը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև նշված ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.25 և 9.2 կետերի համաձայն «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետը լրանալու օրվան՝ 08.01.2018թ. հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ 2018թ. հունվարի 10-ին

«ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի և «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է համապատասխան պայմանագիր:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում, սակայն այն հրապարակվել է 11.01.2018թ-ին, ինչպես նաև բողոքի վերաբերյալ Պատվիրատուին ծանուցվել է 11.01.2018թ-ին՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 10.01.2018թ-ին պայմանագիր կնքելուց հետո:

Ինչ վերաբերում է գնման առարկայի բնութագրերի կամ հրավերի պահանջների բողոքարկմանը, ապա Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում սույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա սույն մասով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

Հաշվի առնելով, որ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվել է 11.01.2018թ., ապա ներկայացված բողոքն ինքնաբերաբար չէր կարող կասեցնել գնման գործընթացը 08.01.2018թ-ից: Ինչպես նաև հաշվի առնելով Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ հայտնում եմ, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետում՝ անգործության ժամանակահատվածում ներկայացված բողոքը չի կարող համարվել շտկված և սահմանված ժամկետում ներկայացված:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ս.թ. հունվարի 10-ին կնքվել է համապատասխան պայմանագիր, առաջարկում եմ 08.01.2018թ. ԳԲԽ-ԷՍ-2018/02 բողոքի

քննության վերաբերյալ հրավիրված նիստը չեղյալ համարել և տեղեկացնել Պատվիրատուին կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակելու համար»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Հայկ Ղազարյանը և Կարինե Աբրահամյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 15.01.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.12.2017թ. նիստի ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 26.12.2017թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Ֆիրմա Ալֆա» և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ների կողմից ընթացակարգին ներկայացված հայտերի պատճենները, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 18.01.2018թ. Խորհրդին ներկայացված գրությունը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Պատվիրատուն 15.01.2018թ. գրությամբ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Ըստ վերջինիս կողմից հայտնած կարծիքի, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից բողոքը ներկայացվել է անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10.01.2018թ., մինչդեռ «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է 28.12.2017թ., այսինքն, անգործության ժամկետը հանդիսանում է 02.01.2018թ. ներառյալ: Պատվիրատուն հայտնել է, որ գնման ընթացակարգի անգործության ժամկետը լրանալու օրվան՝ 08.01.2018թ. հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ 2018թ. հունվարի 10-ին «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի և «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է համապատասխան պայմանագիր: Ուստի, ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ս.թ. հունվարի 10-ին կնքվել է համապատասխան

պայմանագիր, Պատվիրատուն միջնորդություն էր ներկայացրել Խորհրդին՝ Ընկերության բողոքի քննության վերաբերյալ հրավիրված նիստը չեղյալ համարելու նպատակով:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում նույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա նույն մասով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Նույն օրենքի 84-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Խորհուրդը՝ հաշվի առնելով, որ Ընկերության կողմից Բողոքը ներկայացվել է 08.01.2018թ., ինչպես նաև գտնելով, որ «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտարարված անգործության ժամկետն ավարտվել է 08.01.2018թ., որոշեց Պատվիրատուի 15.01.2018թ. գրությամբ ներկայացված միջնորդությունը մերժել:

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ինտերակտիվ գրատախտակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնումների կատարման նպատակով ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ «ինտերակտիվ գրատախտակ» գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, մասնավորապես, սահմանված է հետևյալ բովանդակությամբ.

«-Ակտիվ մակերեսի չափերը ոչ պակաս 77", որը պետք է ունենա հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch):

- Հավաքածուն պետք է բաղկացած լինի հետևյալ բաղադրիչներից ՝

- պրոյեկտոր (1 հատ) (ոչ պակաս 3200 լյումենս), որը պետք է կցված չլինի գրատախտակի հետ որպես նրա բաղկացուցիչ մաս և պահանջի դեպքում հնարավոր լինի նրան առանձնացնել և օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս այլ ծրագրեր իրականացնելու համար:

- կախոց (1 հատ) (առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ)

նախատեսված պրոյեկտորի համար, որի միջոցով հնարավոր կլինի պրոյեկտորը ամրացնել պատին կամ առաստաղին,

- գրատախտակ (1 հատ), արտաքին մակերեսը առնվազն 77" (համապատասխան առաջարկվող պրոյեկտորի գցած պատկերի կողմերի համաբերակցության), մակերեսը անփայլ, գրատախտակը պետք է մշակված լինի այնպես, որ աշխատի առաջարկվող պրոյեկտորի հետ:

- մագնիսական սենսոր (1 հատ)՝ ներառյալ համակարգում աշխատելու համար պահանջվող պարագաները, որոնք պետք է տեղադրվեն և/կամ գրատախտակի վրա և/կամ պատին»:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ինտերակտիվ գրատախտակի հավաքածուի բնութագրով նախատեսվել է կախոցը՝ պատին ամրացնելու համար:

Հանձնաժողովը 21.12.2017թ. նիստի ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով որոշել է «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի փաստաթղթերում արձանագրվել է որոշակի անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, հրավերի տեխնիկական բնութագրում պահանջվում էր կախոց՝ պատին և

առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, սակայն մասնակցի կողմից ներկայացված կախոցը նախատեսված է միայն պատին ամրացնելու համար:

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ծանուցել հրավերի պահանջների նկատմամբ ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանության վերաբերյալ՝ նրան առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից պահանջվող շտկումը չի իրականացվել, և որոշել է Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին:

«181ԴՊ-ՀՄԱ-ԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 28.12.2017թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որով սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 02.01.2018թ-ը ներառյալ (հաջորդ աշխատանքային օրը՝ 08.01.2018թ.):

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու որոշումը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3.1-ով ներկայացված՝ մասնակցի կողմից առաջարկվող Starboard LinkEZ2 սարքի ամբողջական նկարագրում բացակայում են տվյալներ այն մասին, թե քանի հատ միաժամանակյա հպում մատով ի վիճակի է ապահովել նշված սարքը, մինչդեռ Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում հստակ ամրագրված է «...հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch)...»: Ավելին, ըստ Ընկերության կողմից վկայակոչված՝ համացանցից ներբեռնված Starboard LinkEZ2 մակնիշի սարքավորումների Տեղեկատվական բրոշուրի՝ Starboard LinkEZ2 սարքավորումն ապահովում է հրավերով պահանջվող երեք միաժամանակյա հպման փոխարեն միայն երկու միաժամանակյա հպում, ինչը, ըստ Ընկերության, կոպիտ անհամապատասխանություն է Հրավերի պահանջների նկատմամբ:

Ընկերությունը Բողոքով նշել է նաև, որ ներկայացված փաստարկների համար որպես տեղեկությունների ստացման աղբյուր իր կողմից օգտագործվել են համապատասխան արտադրողների պաշտոնական WEB կայքերը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և կարծիք հայտնեց, որ Պատվիրատուն դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ, մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ , 46-րդ, 47-րդ և 48-րդ կետերի պահանջները:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի հայտի գանահատելիս Հանձնաժողովն առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, և հավելեց, որ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղն զբաղեցրած «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերը գնահատվել են Հրավերի պահանջներին համապատասխանող, հետևաբար, Հանձնաժողովը մասնակցի հայտը մերժելու համար ոչ մի իրավական հիմք չի ունեցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի գնման առարկայի բնութագրերը:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի Հրավերի 8.19 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին(...):

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման

արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Բողոքով ներկայացված փաստարկների համար որպես տեղեկությունների ստացման աղբյուր համացանցային կայքերում տեղադրված տեղեկատվությունը չի հանդիսանում ոչ պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկատվություն, և ոչ էլ իրավասու մարմնի կողմից տրամադրված գրավոր եզրակացություն, հետևաբար, Հանձնաժողովի կողմից այն չի կարող օգտագործվել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու համար:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Հայսիտելեկոմ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված Հրավերի հավելված 3.1-ով առաջարկվող ապրանքի բնութագիրը՝ արձանագրում է, որ այն համապատասխանում է ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ապրանքի բնութագրերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, որոնք Ընկերության կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չեն շտկվել:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Հայսիտելեկոմ» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելով, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ Ընկերության կողմից հայտնած դիտարկումներին, ապա Խորհուրդը գտնում է, որ դրանք սույն բողոքի շրջանակներում ենթակա չեն քննարկման, քանի որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 08.01.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ